ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԱՊՁԲ-7/5-1

ք. Երևան 9 -ը մարտի 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Արարատ" Սննդի Կոմբինատ ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Թարվերդյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված սննդամթերք /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

1.2 Ապրանքի մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, համաձայնագիր կնքելու միջոցով: Ընդ որում Վաճառողը պարտավոր է համաձայնագիրը կնքել՝ դրա վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Կանխավճար նախատեսվելու դեպքում Վաճառողը պարտավոր է ներկայացնել կանխավճարի ապահովում՝ ընդ որում ապահովումը ներկայացվում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Հակառակ դեպքում գնման պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանի լուծվում է: Այն դեպքում, երբ սույն պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում նշված ապրանքատեսակների մասով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվի՝ պայմանագիրը այդ մասով կլուծարվի:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավել՝ ապրանքագրով սահմանված ժամկետից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավել՝ ապրանքագրով սահմանված ժամկետից.

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 384 350 054.4 (երեք հարյուր ութսունչորս միլիոն երեք հարյուր հիսուն հազար հիսունչորս ամբողջ քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.6 Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը տնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք անդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ համաձայնագրի կնքման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Գնորդը պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում՝ և այդ հատկացումների շրջանակներում:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: ամաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4,4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.12 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Արարատ» Սննդի Կոմբինատ ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Երևան, Ա[illegible] 29 փ, տ. 13/1
աշխատակազմի գործառնական վարչություն	«Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2380011766070
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 05523921
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ- ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Ս. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ԱՐԱՐԱՏ ՍՆՆԴԻ ԿՈՄԲԻՆԱՏ ПИЩЕВОЙ КОМБИНАТ «АРАРАТ» «ARARAT» FOOD FACTORY 05523921

Հավելված N 1
N ՇՀԱՊՁԲ-7/5-1 *ծածկագրով*
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հ/հ	Անվանումը	Տեխնիկական հատկանիշը
1.	տոմատի մածուկ /Տոմատի մածուկ/	Տոմատի մածուկ 1-ին տեսակի, ԳՕՍՏ 3343-89: Մինչև 1 լ-ոց թիթեղյա տուփերով կամ ապակյա տարաներով, մինչև 9կգ պոլիէթիլենային փաթեթավորմամբ ստվարաթղթե տակդիրներով կամ ստվարաթղթե արկղերով, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս, քան 80%, պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 36 ամիս: Դատարկ տարաները մատակարարին հետ վերադարձման ենթակա չեն: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
2.	տոմատի կետչուպ տեղական արտադրության /Կետչուպ/	ԳՕՍՏ Ռ-52141-2003: Լուծվող չոր նյութերի զանգվածային մասը ոչ պակաս 23 %, ընդհանուր խմբաքանակի 70 %-ը կծու, 30 %-ը՝ քաղցր տեսակի, բաղադրությունը՝ տոմատի մածուկ, շաքարավազ, աղ, սոխ, սխտոր, պղպեղ (կծու տեսակի դեպքում) համեմունքներ, պարունակությունը՝ 100 գրամում՝ ածխաջրեր 10-18, սպիտակուցներ 1.5, էներգետիկ արժեքը 56-88 կկալ, հերմետիկ փակվող 200գ-ոց պոլիմերային սննդային փաթեթավորմամբ, պտուտակավոր կափարիչով, 10կգ-ոց ստվարաթղթե արկղերով, մեկ արկղի մեջ 50 փաթեթ: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս, քան 90%, Պահպանման ժամկետը ոչ պակաս 12 ամիս: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

Ծանոթություն՝

* **Յուրաքանչյուր սննդամթերքի փաթեթավորման արկղերի, տուփերի պիտակների վրա դրոշմված լինեն՝**

1. Արտադրող ձեռնարկության անվանումը
2. Արտադրանքի անվանումը, տեսակը
3. Արտադրության ժամկետը
4. Մատակարար ձեռնարկության անվանումը
5. Պահպանման ժամկետը
6. <<Հինվորի բաժին: Վաճառքի ենթակա չէ>> գրառումը
7. Ապրանքի քաշը նետտո և քանակը հատով (դրոշմվում են միայն արկղերի պիտակները),
8. Ապրանքի զտաքաշը (դրոշմվում է միայն տուփերի պիտակները)
9. Օրենքով սահմանված այլ տեղեկատվություն
10. Արկղերի վրայի գրառումները դրոշմված լինեն տեսանելի վայրում, ներկով 7-ից 10մմ բարձրությամբ տառերով, տվյալ ապրանքատեսակին չվերաբերվող այլ գրառումներ չի թույլատրվում:
11. Ստվարաթղթե ամուր արկղերով, հնգաշերտ ծալքավոր:
12. Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն:
13. Արտադրող ձեռնարկության կողմից պարտադիր նշված լինի պահպանման և արտադրման ժամկետների վերաբերյալ գրառումները:
14. Գործարանային փաթեթավորումը խախտված ապրանքատեսակները արգելվում են:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Արարատ» Մենդի Կոմբինատ ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Երևան, Արաբկիրի 29 փ, տ. 13/1
աշխատակազմի գործառնական վարչություն	«Առէկսիմբանկ-Գազ Պրոմբանկի խումբ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2380011766070
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 05523921
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-	
ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Ս. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

Հավելված N 2
N ՇՀԱՊՁԲ-7/5-1 *ծածկագրով*
գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման առարկան	Չ/Մ	Ընդհանուր քանակը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Գումարը, ՀՀ դրամ	Ապրանքի մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում
1	տոմատի մածուկ /Տոմատի մածուկ/	կգ	191658	697.8	133738952.4	
2	տոմատի կետչուպ տեղական արտադրության /Կետչուպ/	կգ	314049	798	250611102	
Ընդամենը	384 350 054.4 (երեք հարյուր ութսունչորս միլիոն երեք հարյուր հիսուն հազար հիսունչորս ամբողջ քառասուն) ՀՀ դրամ					

Ծանոթություն՝ Մատակարարման վայրը՝ Երևանի կենտրոնական պարենային բազա:

Հավելված N 3
N ՇՀԱՊՁԲ-7/5-1 *ծածկագրով*
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/Հ	Գնման առարկան	Չ/Մ	Ընդհանուր քանակը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Գումարը, ՀՀ դրամ	Պայմանագրի կատարման համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ կնքվելիք Համաձայնագրերով սահմանված վճարման ժամանակացույցով
1	տոմատի մածուկ /Տոմատի մածուկ/	կգ	191658	697.8	133738952.4	
	տոմատի կետչուպ տեղական արտադրության /Կետչուպ/	կգ	314049	798	250611102	

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Արարատ» Սննդի Կոմբինատ ՍՊԸ
ք. Երևան, Արաբկիրի 29 փ, տ. 13/1
«Առէկսիմբանկ-Գազ Պրոմբանկի խումբ» ՓԲԸ
Հ/Հ 2380017660700
ՀՎՀՀ 05523921

տնօրեն

Ս. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

Հավելված N 4
N ՇՀԱՊՁԲ-7/5-1 *ծածկագրով*
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
N ՇՀԱՊՁԲ-7/5-1 *ծածկագրով*
գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ՇՀԱՊՁԲ-7/5-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 30. 03. 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Արարատ" Սննդի Կոմբինատ ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Թարվերդյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 09.03.2016թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/5-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.2 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **128 116 684.8 (մեկ հարյուր քսանութ միլիոն մեկ հարյուր տասնվեց հազար վեց հարյուր ութսունչորս ամբողջ ութսուն) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՀՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 00867415 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ- ՆՏԱ դեպարտամենտի պետ	«Արարատ» Սննդի Կոմբինատ ՍՊԸ ք. Երևան, Արաբկիրի 29 փ, տ. 13/1 «Առէկսիմբանկ-Գազ Պրոմբանկի խումբ» ՓԲԸ Հ/Հ 23800117660700 ՀՎՀՀ 05523921 տնօրեն
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Ս. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

Հավելված N 1
№ ՇՀԱՊՁԲ-7/5-1 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ ամիսների 2016թ.								
						ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 20.12.2016թ
1	տոմատի մածուկ /Տոմատի մածուկ/	կգ	63886	697.8	44579650.8	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7886
2	տոմատի կետչուպ տեղական արտադրության /Կետչուպ/	կգ	104683	798	83537034			12000	12000	12000	12000	12000	12000	32683
Ընդամենը	128 116 684.8 (մեկ հարյուր քսանութ միլիոն մեկ հարյուր տասնվեց հազար վեց հարյուր ութսունչորս ամբողջ ութսուն) ՀՀ դրամ													

Հավելված N 2
№ ՇՀԱՊՁԲ-7/5-1 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ								
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	տոմատի մածուկ /Տոմատի մածուկ/	15333100/1/4/3	4884600	9769200	14653800	19538400	24423000	29307600	34192200	39076800	44579650.8
2	տոմատի կետչուպ տեղական արտադրության /Կետչուպ/	15871230/1/4/3			9576000	19152000	28728000	38304000	47880000	57456000	83537034

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի տնօրեն

Ա. ՄԻՐՇԱԲԵԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Արարատ» Սննդի Կոմբինատ ՍՊԸ
ք. Երևան, Արաբկիրի 29 փ, տ. 13/1
«Առէկսիմբանկ-Գազ Պրոմբանկի խումբ» ՓԲԸ
Հ/Հ 23800117660700
ՀՎՀՀ 05523921
տնօրեն

Ս. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1

N ՇՀԱՊՁԲ-7/5-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N 1 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ

ք. Երևան **15-ը հուլիսի 2016թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Մ. Հակոբյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և "Արարատ" Սննդի Կոմբինատ ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Թարվերդյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 09.03.2016թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/5-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.4 կետը և 30.03.2016թ. կնքված N 1 համաձայնագիրը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N 1 համաձայնագրի գնման ժամանակացույցում ներառված օգոստոս-դեկտեմբեր ամիսներին մատակարարման ենթակա 35883.39 կգ տոմատի մածուկի և 80573 կգ տոմատի կետչուպի միավորի գները նվազեցնել և սահմանել համապատասխանաբար 678.2 և 767.2 ՀՀ դրամ, համամասնորեն նվազեցնելով գնման և վճարման ժամանակացույցերով նախատեսված գումարները /Հավելված N 1,2/: Արդյունքում N 1 համաձայնագրի ընդհանուր գումարը կազմում է 124 931 722 (մեկ հարյուր քսանչորս միլիոն ինը հարյուր երեսունմեկ հազար յոթ հարյուր քսաներկու) ՀՀ դրամ:

1.2 Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է 2016թ. հուլիսի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն փոփոխությանը կից Հավելված N 1-ը հանդիսանում է փոփոխության անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Արարատ» Սննդի Կոմբինատ ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Երևան, Արաբկիրի 29 փ, տ. 13/1
աշխատակազմի գործառնական վարչություն	«Առէկսիմբանկ-Գազ Պրոմբանկի խումբ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 23800117660700
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 05523921
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Մ. ՀԱԿՈԲՅԱՆ	Ս. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

Հավելված N .

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՍՈՒՅՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ ամիսների 2016թ.								
						ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 20.12.2016թ
1	տոմատի մածուկ /Տոմատի մածուկ/	կգ	28002.61	697.8	19540221.3	7000	7000	7000	7000	2.61				
2	տոմատի մածուկ /Տոմատի մածուկ/	կգ	35883.39	678.2	24336115.1					6997.39	7000	7000	7000	7886
3	տոմատի կետչուպ տեղական արտադրության /Կետչուպ/	կգ	24110	798	19239780			12000	12000	110				
4	տոմատի կետչուպ տեղական արտադրության /Կետչուպ/	կգ	80573	767.2	61815605.6					11890	12000	12000	12000	32683
Ընդամենը		124 931 722 (մեկ հարյուր քսանչորս միլիոն ինը հարյուր երեսունմեկ հազար յոթ հարյուր քսաներկու) ՀՀ դրամ												

Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՍՈՒՅՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

Հ/հ	Գնման առարկան	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ								
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	տոմատի մածուկ /Տոմատի մածուկ/	15333100/1/4/3	4884600	9769200	14653800	19538400	24285851.2	29033251.2	33780651.2	38528051.2	43876336.4
2	տոմատի կետչուպ տեղական արտադրության /Կետչուպ/	15871230/1/4/3			9576000	19152000	28361788	37568188	46774588	55980988	81055385.6

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Արարատ» Սննդի Կոմբինատ ՍՊԸ
ք. Երևան, Արաբկիրի 29 փ, տ. 13/1
«Առէկսիմբանկ-Գազ Պրոմբանկի խումբ» ՓԲԸ
Հ/Հ 23...
ՀՎՀՀ 05523921

Ս. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2
№ ՇՀԱՊՁԲ-7/5-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 15. 07. 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Մ. Հակոբյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Արարատ" Սննդի Կոմբինատ ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Թարվերդյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 09.03.2016թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/5-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.2 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **8 830 032 (ութ միլիոն ութ հարյուր երեսուն հազար երեսուներկու) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Արարատ» Սննդի Կոմբինատ ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Երևան, Արաբկիրի 29 փ, տ. 13/1
աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամէկսիմբանկ-Գազ Պրոմբանկի խումբ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2380011780700
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 05523921
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ	
Մ. ՀԱԿՈԲՅԱՆ	Ս. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

Հավելված N 1
№ ՇՀԱՊՁԲ-7/5-1 գնման պայմանագրի N 2 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ ամիսների 2016թ.
						օգոստոս
1	տոմատի մածուկ /Տոմատի մածուկ/	կգ	2160	678.2	1464912	2160
2	տոմատի կետչուպ տեղական արտադրության /Կետչուպ/	կգ	9600	767.2	7365120	9600
Ընդամենը	8 830 032 (ութ միլիոն ութ հարյուր երեսուն հազար երեսուներկու) ՀՀ դրամ					

Հավելված N 2
№ ՇՀԱՊՁԲ-7/5-1 գնման պայմանագրի N 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ				
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	տոմատի մածուկ /Տոմատի մածուկ/	15333100/1/4/3	1464912	1464912	1464912	1464912	1464912
2	տոմատի կետչուպ տեղական արտադրության /Կետչուպ/	15871230/1/4/3	7365120	7365120	7365120	7365120	7365120

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ
Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Արարատ» Սննդի Կոմբինատ ՍՊԸ
ք. Երևան, Արաբկիրի 29 փ, տ. 13/1
«Ռոսէկսիմբանկ-Գազ Պրոմբանկի խումբ» ՓԲԸ
Հ/Հ 2390011[illegible]60700
ՀՎՀՀ 05523921
Ս. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ № 2
№ ՇՀԱՊՁԲ-7/5-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան -ը հոկտեմբերի 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Վ. Հովհաննիսյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Արարատ» Սննդի Կոմբինատ ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Թարվերդյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 09.03.2016թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/5-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.4 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով Վաճառողի կամահայտնությունը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել վաճառողի բանկային վավերապայմանների փոփոխություն՝ «Առէկսիմբանկ-Գազ Պրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի՝ Հ/հ 23800117660700, փոխարեն հիմք ընդունել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի՝ Հ/հ 1570012093430100:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն Փոփոխությունը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Արարատ» Սննդի Կոմբինատ ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Արաբկիրի 29 փ, տ. 13/1
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ամերիաբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 1570012093430100
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 05523921
ՀՎՀՀ 00867415	
ՀՀ պաշտպանության նախարարության	տնօրեն
ՆՏԱ դեպարտամենտի պետ՝ ՊԺԿ	
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	Ս. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3
№ ՇՀԱՊՁԲ-7/5-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 30. 01. 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Արարատ" Սննդի Կոմբինատ ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Թարվերդյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 09.03.2016թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/5-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.2 կետերը և այն փաստը, որ "Արարատ" Սննդի Կոմբինատ ՍՊԸ-ն համաձայնվել է «տոմատի մածուկ /Տոմատի մածուկ/» և «տոմատի կետչուպ տեղական արտադրության /Կետչուպ/» ապրանքատեսակների առաջարկված միավորի գները նվազեցնել, սահմանելով համապատասխանաբար՝ 678.2 ՀՀ դրամ, 767.2 ՀՀ դրամ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **122 494 632.4 (մեկ հարյուր քսաներկու միլիոն չորս հարյուր հինսունչորս հազար վեց հարյուր երեսուներկու ամբողջ քառասուն) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Արարատ» Սննդի Կոմբինատ ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Երևան, Արաբկիրի 29 փ, տ. 13/1
աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570012093430100
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 05523921
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ս. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

AH0434655

Հավելված N 1
№ ՇՀԱՊՁԲ-7/5-1 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ ամիսների 2017թ.								
						մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր
1	տոմատի մածուկ /Տոմատի մածուկ/	կգ	56182	678.2	38102632.4	8000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6182
2	տոմատի կետչուպ տեղական արտադրության /Կետչուպ/	կգ	110000	767.2	84392000	11000	11000	11000	11000	11000	11000	11000	11000	22000
Ընդամենը	122 494 632.4 (մեկ հարյուր քսաներկու միլիոն չորս հարյուր իննսունչորս հազար վեց հարյուր երեսուներկու ամբողջ քառասուն) ՀՀ դրամ													

Հավելված N 2
№ ՇՀԱՊՁԲ-7/5-1 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ									
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	տոմատի մածուկ /Տոմատի մածուկ/	15333100/1/4/3	5425600	9494800	13564000	17633200	21702400	25771600	29840800	33910000	38102632.4	38102632.4
2	տոմատի կետչուպ տեղական արտադրության /Կետչուպ/	15871230/1/4/3	8439200	16878400	25317600	33756800	42196000	50635200	59074400	67513600	84392000	84392000

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Արարատ» Սենդի Կոմբինատ ՍՊԸ
ք. Երևան, Արաբկիրի 29 փ, տ. 13/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570012093430100
ՀՎՀՀ 05523921

տնօրեն

Ս. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ԱՀ 0434655